



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի
ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏ

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈԴ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

2022 թվականի դեկտեմբերի 28-ին ժամը 14:00-ին քաղաք Էջմիածին, Մովսես Խորենացի 2 հասցեում տեղի ունեցավ Վաղարշապատ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի չորրորդ նիստը, որին մասնակցում էր Վաղարշապատ համայնքի ավագանու 23 անդամ, հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց նիստն արձանագրողը:

Վաղարշապատ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի չորրորդ նիստին հրավիրված են համայնքային կառույցների ներկայացուցիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ:

Նիստը վարում է համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը:

Նիստի արձանագրումն ապահովում է աշխատակազմի քարտուղար Գ.Հարությունյանը:

Նիստն սկսվեց Հայաստանի Հանրապետության և համայնքի հիմներով:

Նիստն անցկացվում է առցանց հեռարձակմամբ:

Ավագանու նիստին չներկայացած անդամների բացակայությունը համարվում է անհարգելի՝ հարգելիության վերաբերյալ տեղեկատվություն չներկայացնելու հիմքով:

Նիստը վարողը ավագանու անդամներին ներկայացրեց նիստի օրակարգի հարցը և առաջարկեց քննարկել ու հաստատել օրակարգը:

Օրակարգի նախագիծը դրվում է քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 23 անդամ

Քվեարկության արդյունքները՝

կողմ – 23

դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Վաղարշապատ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի 2022 թվականի դեկտեմբերի 28-ի չորրորդ նիստի օրակարգը և քննարկել առաջադրված հարցերը, այն է՝

1. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱԶՍՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ 2023Թ. ԲՅՈՒՋԵՏԱՑԻՆ ՈՒՂԵՐԸ

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԵՆԹԱԿԱ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՑԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՍՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-ՆԵՐՈՒՄ ԵՐԵՖԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ 2023Թ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

7. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ-ՆԵՐՈՒՄ ԵՎ «ԵՂԻՇԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԵՂԱՐՎԵՍԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-ՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

8. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏ» ՀՈԱԿ-Ի, «ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ԵՎ «ՄՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-ՆԵՐԻ ԴԱՀԼԻՃՆԵՐԻ ԵՎ ՆԱԽԱՍՐԱՀԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՐԵՄԱՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՄՆՆԴԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ ԵՎ ՄԵԿ ԵՐԵՄԱՑԻ ՀԱՄԱՐ ՄԵԿ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՉԱՓԱԲԱԺՆԻ ԾԱՎԱԼԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏ» ՀՈԱԿ-Ի ՄՐԱՀՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ԴԱՀԼԻՃՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N 21-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունեց թիվ 164 որոշումը:

Օրակարգի 1-ին հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղար Գրիգոր Հարությունյանը: Ներկայացնելով Վաղարշապատ համայնքում տեղական տուրքերի և վճարների 2023 թվականի դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթադրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Հարցի քննարկման ժամանակ ներկայացավ ավագանու անդամ Նորայր Օհանյանը և Կարինե Միքայելյանը: Ներկա ավագանու անդամների թիվը գրանցվեց 25:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 25 անդամ

Քվեարկության արդյունքները՝

կողմ - 24
դեմ – 0
ձեռնպահ – 1

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ:

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 165 որոշումը:

Հայտարարվեց 5 րոպե ընդմիջում:
Նիստը շարունակվեց:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ՝ Համայնքի ղեկավարի հրավերով աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լուսինե Քալաշյանը ներկայացրեց Վաղարշապատ համայնքի ղեկավարի 2023թ. բյուջետային ուղերձը:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լուսինե Քալաշյանը:

Ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամը հերթադրվեց: Հարցերը տալու համար ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն ազգանունը՝ Ռուբիկ Ենքոյան:

Ռուբիկ Ենքոյան: Եկամուտների մասով դոտացիան նվազել է:

Պատասխանեց Լ. Քալաշյան: Այո նվազել է մոտ 7 միլիոն դրամով, քանի որ անցած տարում բյուջեն գերակատարվել է:

Ռուբիկ Ենքոյան: Ծախսերի հատվածում կրթության գիտության մասով նվազել է, ինչո՞ւ:

Պատասխանեց Լ. Քալաշյան: Անցած բյուջեի փոփոխությանը նվազեցվել է ծնող միջոցների հավաքագրումը, պլանավորումը նվազացվել է, քանի որ վերանայվել է սնունդը, նախկինում պլանավորվում էր ավելի շատ, բայց արդյունքում այդ չափերով գնումներ չէր իրականացվում, ինչպես նաև մանկապարտեզների վերանորոգում է պլանավորվում և շատ ծնողներ նախընտրում են սպասել ավարտին քան տեղափոխվել այլ մանկապարտեզ:

Ռուբիկ Ենքոյան: Այլ ծրագրերում ավելացել է 9 միլիոն գումարով, սոցիալական հատուկ արտոնություններ, դրանք ինչ ծրագրեր են:

Պատասխանեց Լ. Քալաշյան: Նախկինում հաստատվել էր երիտասարդական զարգացման կենտրոնի համար ծախսերի ֆինանսավորումը կատարվում է համայնքի կողմից, այդ ավելացումը վերաբերում է դրան:

Ռուբիկ Ենքոյան: Աղբահանության գումարն ավելացվել է ծախսերի մասով, եթե այս ավելացումով քաղաքի աղբահանության հարցը կարող ենք լուծել:

Պատասխանեց Լ. Քալաշյան: Տարեկան կտրվածքով անցյալ տարվա նկատմամբ չի ավելացել: Քանի որ նվազագույն աշխատավարձը ավելացել է, ուստի աշխատավարձի ֆոնդն է ավելացել:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 25 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 23
դեմ – 0
ձեռնպահ – 2

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ:

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 166 որոշումը:

Օրակարգի 4-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լուսինե Քալաշյանը:

Ներկայացնելով համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մոթերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 25 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 24
դեմ – 0
ձեռնպահ – 1

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ:

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 167 որոշումը:

Ավագանու նիստը օրակարգի 5-րդ հարցի քննարկումը սկսելուց առաջ նիստը լքեց Աղասի Բաղդասարյանը:

Օրակարգի 5-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղար Գրիգոր Հարությունյանը:

Ներկայացնելով Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի և ենթակա կառույցների 2023 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամը հերթագրվեց: Հարցերը տալու համար ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն ազգանունը՝ Հրաչյա Ավետիսյան:

Հրաչյա Ավետիսյան: Իրավաբանական բաժնի կազմում պետության պատվիրակած լիազորություններն իրականացնող աշխատակիցների աշխատավարձը ավելի ցածր է, կարող ենք հավասարեցնել:

Պատասխանեց Լ. Քալաշյան: Քանի որ դրանք ֆինանսավորվում են պետության կողմից, այդքան է սահմանվել:

Դ. Գասպարյան: Առաջարկում եմ հավասարեցնել և այդ պայմանով հաստատել հաստիքացուցակը:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 24 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 168 որոշումը:

Օրակարգի 6-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի կրթության և մշակույթի բաժնի պետ Լիլիթ Հակոբյանը:

Ներկայացնելով Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության մանկապարտեզ ՀՈԱԿ-ներում երեխաների խնամքի համար գանձվող 2023թ վարձավճարների գծով արտոնությունների մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 24 անդամ

Քվեարկության արդյունքները՝

կողմ - 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 169 որոշումը:

Օրակարգի 7-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի կրթության և մշակույթի բաժնի պետ Լիլիթ Հակոբյանը:

Ներկայացնելով Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ներում և «Եղիշե Թադևոսյանի անվան գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ-ում 2023 թվականի ուսման վարձերի գծով արտոնությունների մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 24 անդամ

Քվեարկության արդյունքները՝

կողմ - 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 170 որոշումը:

Օրակարգի 8-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի կրթության և մշակույթի բաժնի պետ Լիլիթ Հակոբյանը:

Ներկայացնելով Վաղարշապատի համայնքապետարանի «Կոմիտասի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ի, «Մակար Եկմայանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց» և «Մպիրիդոն Մելիքյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ների դահլիճների և նախասրահի վարձակալության վճարների չափերը սահմանելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 24 անդամ

Քվեարկության արդյունքները՝

կողմ - 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 171 որոշումը:

Օրակարգի 9-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի կրթության և մշակույթի բաժնի պետ Լիլիթ Հակոբյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաներին տրվող սննդի անվանացանկը և մեկ երեխայի համար մեկ օրվա ընթացքում նախատեսված սննդամթերքի չափաբաժնի ծավալը հաստատելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթազրկվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 24 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 172 որոշումը:

Օրակարգի 10-րդ հարցի առթիվ՝ գեկույցը ներկայացրեց աշխատակազմի կրթության և մշակույթի բաժնի պետ Լիլիթ Հակոբյանը:

Ներկայացնելով Վաղարշապատի համայնքապետարանի «Կոմիտասի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ի սրահների 2023 թվականի վարձավճարների չափերը սահմանելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթազրկվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 24 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 173 որոշումը:

Հայտարարվեց 20 րոպե ընդմիջում:

Նիստը նախագահողը հարգելի պատճառներով լքեց նիստը, նիստը շարունակեց վարել համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արսեն Պետրոսյանը:

Ավագանու նիստը լքեց նաև Դավթյան Արմենը, Կարեն Գևորգյանը, Գուրգ Դազարյանը:

Նիստը շարունակվեց, նիստին ներկա են ավագանու 20 անդամներով

Օրակարգի 11-րդ հարցի առթիվ՝ գեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արսեն Պետրոսյանը:

Ներկայացնելով Վաղարշապատի համայնքապետարանի «Մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի դահլիճների վարձակալության վճարների չափերը սահմանելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթազրկվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 20 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 20
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 174 որոշումը:

Օրակարգի 12-րդ հարցի առթիվ՝ գեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Մհեր Մկրտչյանը:

Ներկայացնելով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 20 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ – 20
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 175 որոշումը:

Օրակարգի 13-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Մհեր Մկրտչյանը:
Ներկայացնելով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 20 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ – 20
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 176 որոշումը:

Օրակարգի 14-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Մհեր Մկրտչյանը:
Ներկայացնելով ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի գլխավոր հատակագծի փոփոխությունը հաստատելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 20 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ – 20
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 177 որոշումը:

Օրակարգի 15-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լուսինե Քալաշյանը:

Ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 18-Ի N 21-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 20 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ – 20
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 178 որոշումը:

Օրակարգի հարցերը սպառվելուց հետո Ավագանու նիստը հայտարարվեց փակված:

<u>Հ/ՀԱզգանուն Անուն</u>	<u>Կողմ</u>	<u>Դեմ</u>	<u>Ձեռնպահ</u>	<u>Հ/ՀԱզգանուն Անուն</u>	<u>Կողմ</u>	<u>Դեմ</u>	<u>Ձեռնպահ</u>
1. Արսեն Պետրոսյան	_____	_____	_____	11. Աննա Կիրակոսյան	_____	_____	_____
2. Էդվարդ Ափոյան	_____	_____	_____	12. Սևակ Խաչատրյան	_____	_____	_____
3. Նաիրա Բասենցյան	_____	_____	_____	13. Վահրամ Ղարիբջանյան	_____	_____	_____
4. Արամայիս Միրզոյան	_____	_____	_____	14. Նաիրա Գրիգորյան	_____	_____	_____
5. Լիլիթ Միրզախանյան	_____	_____	_____	15. Նորայր Օհանյան	_____	_____	_____
6. Ներսես Մելիքյան	_____	_____	_____	16. Էմմա Պատուրյան	_____	_____	_____
7. Վարդան Գրիգորյան	_____	_____	_____	17. Էդգար Թամազյան	_____	_____	_____
8. Կարեն Մովսիսյան	_____	_____	_____	18. Քրիստինե Հակոբյան	_____	_____	_____
9. Գոհար Նիկողոսյան	_____	_____	_____	19. Ռուբիկ Ենոքյան	_____	_____	_____
10. Հրաչյա Ավետիսյան	_____	_____	_____	20. Կարինե Միքայելյան	_____	_____	_____

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝

Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ